ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների կլոր սեղան քննարկմանը մասնակցելու նպատակով Բիշքեկ (Ղրղզստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը՝
Անահիտ Գալստյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝
Բիշքեկ (Ղրղզստանի Հանրապետություն), 2018 թվականի փետրվարի 20-21-ը

4. Հրավիրող կողմը՝
Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝
Մասնակցություն կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների կլոր սեղան քննարկմանը

6. Քննարկված թեմաները

1) «Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության» պայմանագրի նախագծի մշակման աշխատանքների ընթացքի վերաբերյալ
2) Կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև համագործակցության մասին կարգի նախագծի մշակում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների կլոր սեղան քննարկման 1-ին մասը վարում էր Ղրղզստանի Հանրապետության սոցիալական հիմնադրամի նախագահի տեղակալ Ու. Ասլանովը:

Կլոր սեղանին մասնակցում էին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնատար անձինք, ԵՏՄ անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների ներկայացուցիչներ, Ղրղզստանի Հանրապետության կառավարության, պառլամենտի սոցիալական հարցերի, կրթության,

գիտության և առողջապահության, ինչպես նաև բյուջեի և ֆինանսների կոմիտեների անդամներ, Նախագահի ապարատի ներկայացուցիչներ:

Կլոր սեղան քննարկման 2-րդ մասը վարում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույումբաեվան, մասնակցում էին ԵՏՄ անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների ներկայացուցիչները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնատար անձինք:

1) Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության» պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) նախագծի մշակման աշխատանքների ընթացքի վերաբերյալ

Պայմանագրի նախագծի մշակման աշխատանքների ընթացքը ներկայացրեց հանձնաժողովի տնտեսական և ֆինանսական քաղաքականության գծով կոլեգիայի անդամ Տ. Մ Ժակսիլիկովը: Ներկայացնելով պայմանագրի ընդունման նպատակները (ԵՏՄ անդամ պետություններում աշխատավորների համար հավասար կենսաթոշակի իրավունքների ապահովում, կենսաթոշակի նշանակմանը և արտահանմանն առնչվող խնդիրների լուծում, կենսաթոշակային ապահովության բնագավառում համագործակցության զարգացում) նա միաժամանակ նշեց առկա խնդիրները, որոնք պետք է հաշվի առնել պայմանագրի նախագիծը մշակելիս (անդամ պետությունների կենսաթոշակային համակարգերի տարբերությունները, կենսաթոշակի արտահանման բացակայությունը և այլն): Ներկայացվեցին նաև պայմանագրի առանցքային դրույթները, այն է՝

- աշխատավորների և աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների հավասարություն,
- յուրաքանչյուր անդամ պետություն վճարում է իր տարածքում ձեռք բերած աշխատանքային ստաժի ժամանակահատվածի համար,
- յուրաքանչյուր անդամ պետություն կենսաթոշակի իրավունքը որոշում է և կենաթոշակի չափը հաշվարկում է իր օրենսդրության համաձայն,
- կենսաթոշակի իրավունքը որոշելիս հաշվի է առնվում նաև ԵՏՄ անդամ պետությունների տարածքներում ձեռք բերած աշխատանքային ստաժը,
- կենսաթոշակն արտահանվում է (անդամ պետության տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժի համար նշանակված կենսաթոշակը վճարվում է՝ անկախ ԵՏՄ այլ անդամ պետությունում բնակվելու հանգամանքից):

Անդրադառնալով պայմանագրի ընդունման ապահովմանն ուղղված՝ ԵՏՄ տարբեր մարմինների ընդունած ակտերին, նշվեց, որ պայմանագիրը և դրա կիրարկումն ապահովող կարգն անհրաժեշտ է, որ ուժի մեջ մտնեն միաժամանակ: Նախատեսվում է, որ պայմանագիրը և կարգը ուժի մեջ կմտնեն 2018 թվականին, իսկ ԵՏՄ ինտեգրված տեղեկատվական համակարգի կիրառմամբ (էլեկտրոնային եղանակով) տեղեկատվական փոխանակումը կողմերի միջև հնարավոր կլինի իրականացնել 2019 թվականին:

Հաշվի առնելով պայմանագրի նշանակությունն ու կարևորությունը ԵՏՄ անդամ պետությունների աշխատավորների կենաթոշակային ապահովության իրականացման

գործում, Տ. Մ Ժակսիլիկովը հույս հայտնեց, որ կողմերի ձեռնարկած ակտիվ ջանքերի շնորհիվ, պայմանագիրը և կարգը ուժի մեջ կմտնեն նախանշված ժամկետում:

Կլոր սեղան քննարկմանը Ղրղզստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը ներկայացրեց և պայմանագրի ընդունման առավելություններին իր ելույթում անդրադարձավ սոցիալական ֆոնդի նախագահ Տ. Աջափարովը: Մասնավորապես նա նշեց, որ պայմանագրի ընդունումը կնպաստի՝

- ԵՏՄ ցանկացած անդամ պետությունում աշխատելուն՝ առանց աշխատանքային ստաժը կորցնելու,
- կենսաթոշակի արտահանմանը,
- աշխատանքի տեղավորման լեգալացմանը,
- աշխատուժի ազատ տեղաշարժի ակտիվացմանը:

Պայմանագրի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորող 8 պատճառների ներկայացմանն էր նվիրված ՌԴ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարի տեղեկալ Ա. Պուդովի ելույթը: Ներկայացված ՌԴ վիճակագրական տվյալներով (ըստ անդամ պետությունների՝ աշխատողների թիվ, միջին ամսական աշխատավարձ և այլն) բանախոսն անդրադարձավ նաև պայմանագրի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետին, որը վերաբերում է ՌԴ օրենսդրության համաձայն կենսաթոշակի իրավունքը որոշելիս անհատական կենսաթոշակային գործակցի[1] (այսուհետ՝ ԱԿԳ) սահմանմանը այն դեպքում, երբ անհրաժեշտ է հաշվի առնել նաև մյուս անդամ պետություններում ձեռք բերած աշխատանքային ստաժը:

Պայմանագրի նախագծի խնդրո առարկա դրույթով ԱԿԳ-ի արժեքն անդամ պետություններում ձեռք բերած 1 տարվա աշխատանքային ստաժի համար առաջարկվում է սահմանել 2, իսկ ռուսական կողմն առաջարկում է սահմանել 1: Ա. Պուդովն իր ելույթում նպատակ ուներ վիճակագրական տվյալներով և հաշվարկներով հիմնավորել ռուսական կողմի առաջարկը:

Հայաստանի ներկայացուցիչը կողմ արտահայտվելով պայմանագրի ընդունմանը՝ համառոտ ներկայացրեց ՀՀ կենաթոշակային համակարգը, ճշգրտեց ՌԴ կողմից ներկայացրած նյութում տեղ գտած՝ համակարգի հիմնական պարամետրերի որոշ ցուցանիշները և ՌԴ վիճակագրական տվյալների հիման վրա (2012-2016թթ. ՀՀ քաղաքացիների ձեռք բերած ԱԿԳ կազմել է 15, Բելառուսինը՝ 32.3, Ղազախստանինը՝ 27.8, իսկ Ղրղզստանինը՝ 13.7) կատարված հաշվարկով բարձրացրեց այն հարցը, որ ԱԿԳ-ն 1 սահմանելու դեպքում անդամ պետությունների աշխատավորների համար աշխատանքային ստաժի պահանջվող տևողությունն անուղղակիորեն մեծացվում է: Նա նշեց, որ ներկայացված հաշվարկները տեղեկատվական առումով ավելի արժեքավոր կլիներին, եթե դրանք կատարվեին ըստ ԱԿԳ միջակայքերի՝ 0-1, 1-2, 2 և ավելի: Միաժամանակ նշեց, որ ՌԴ առաջարկի վերաբերյալ ՀՀ դիրքորոշումը կներկայացվի հետագայում՝ գրավոր:

---

[1] ՌԴ օրենսդրության համաձայն՝ կենսաթոշակի իրավունք տվող պայմաններն են՝ տարիքը, աշխատանքային ստաժի տևողությունը և ԱԿԳ-ն, որը հաշվարկվում է՝ ելնելով աշխատավորի կատարած սոցիալական վճարների գումարի և տվյալ տարվա համար սահմանված՝ սոցիալական վճարների առավելագույն գումարի հարաբերակցությունից:

Բելառուսի մասնակիցը կողմ արտահայտվելով պայմանագրի ընդունմանը, կրկին անգամ հաստատեց և հիմնավորեց իրենց նախկին դիրքորոշումը ԱԿԳ-ի արժեքի վերաբերյալ, այն է՝ կողմ է ՌԴ առաջարկությանը:

Ղազախական և ղրղզական կողմերը ևս կողմ արտահայտվելով պայմանագրի ընդունմանը և նշեցին, որ ՌԴ առաջարկի վերաբերյալ իրենց դիրքորոշումը կներկայացնեն գրավոր (շեղատառով գրված վերջին 4 պարբերությունները հրապարակման ենթակա չեն):

Ասպիսով, պայմանագրի ընդունման անհրաժեշտության հարցին անդարադարձան նաև կլոր սեղանի մյուս մասնակցները, այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետությունների անդամ ներկայացուցիչները՝ կողմ արտահայտվելով պայմանագրի ընդունմանը:

Կլոր սեղանի աշխատանքն ավարտվեց հանձնաժողովի ու կենսաթոշակային և սոցիալական ֆոնդերի միջազգային ասոցիացիայի միջև հուշագրի ստորագրմամբ:

2) Կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև համագործակցության մասին կարգի (այսուհետ՝ կարգ) նախագծի մշակում

Պ. Ու. Սույումբաեվան մասնակիցներին տեղեկացրեց, որ քննարկման ներկայացված կարգի նախագիծը լրամշակվել է՝ հաշվի առնելով կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ նախորդ՝ 2017 թվականի սեպտեմբերի 26-27-ը կայացած քննարկման արձանագրության հանձնարարականի համաձայն կողմերից ստացված առաջարկությունները:

Որոշվեց նախագիծը քննարկել հոդված առ հոդված:

Քննարկման մասնակից՝ հանձնաժողովի ինֆորմացիոն տեխնոլոգիաների դեպարտամենտի աշխատակից Ա. Լոզինն առաջարկեց ի սկզբանե նախագիծը լրամշակել, հաշվի առնելով այն հանգանքը, որ պայմանագրի շրջանակներում տեղեկատվությունը կողմերի միջև փոխանակվելու է էլեկտրոնային եղանակով՝ ԵՏՄ ինտեգրված տեղեկատվական համակարգի կիրառմամբ:

Քննարկման ընթացքում կողմերը համաձայնություն ձեռք բերեցին 1-5 հոդվածների վերաբերյալ: Մասնավորապես.

- խմբագրվեց 1-ին հոդվածը՝ պայմանագրի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով նաև պարոն Ա. Լոզինի առաջարկությունը (թղթային եղանակով տեղեկատվության փոխանակմանը անդրադառնալ կարգի անցումային դրույթներում),
- ամբողջությամբ հանվեց 2-րդ հոդվածը, քանի որ նպատակահարմար չգտնվեց ընդունել հանձնաժողովի առաջարկը՝ կարգում նոր հասկացություններ սահմանելու վերաբերյալ, ինչը ենթադրում էր լրամշակել նաև պայմանագիրը՝ անդրադառնալով դրանով սահմանվող հասկացություններին,
- մանրամասն քննարկելով կենսաթոշակ նշանակելու համար աշխատավորի՝ իրավասու մարմին դիմելու ընթացակարգը և հաշվի առնելով անդամ պետությունների օրենսդրությունները, հստակեցվեցին 3-5-րդ հոդվածների դրույթները և կարգին կից համապատասխան տեղեկատվական ձևաչափերը (ֆորմուլյարները):

Քննարկման արդյունքում որոշվեց՝ հաշվի առնելով ժամանակի սղությունը, ներկայացված առաջարկությունների, համաձայնեցված մոտեցումների հիման վրա հանձնաժողովի պատասխանատու աշխատակիցները կլրամշակեն կարգի նախագիծը, ինչպես նաև դրան կից տեղեկատվական ձևաչափերը և կարծիքի կուղարկեն կողմերին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկությունները հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրության համաձայն՝ նրանում նշված ժամկետներում:

9. Գործուղվողը
Անահիտ Զորիկի Գալստյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

26.02.2018թ